ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԿԵՐԱԿ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վարդենիկի համայնքապետարան

Հուշագիր

«Համայնքի զարկերակ » երիտասարդական հասարակական կազմակերպության և Վարդենիկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի միջև, Վարդենիկ համայնքի զարգացմանը միասնական նպաստելու, Հաամագործակցության մասին

Գ. Վարդենիկ 29.03.2019թ.

«Համայնքի զարկերակ» երիտասարդական կազմակերպությունը (այսուհետ՝ Համայնքի զարկերակ ԵՀԿ), ի դեմս նախագահ՝ Արտուշ Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա և Վարդենիկի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

Սույն հուշագրով «Համայնքի զարկերակ» ԵՀԿ-ի առաջարկով և Վարդենիկ համայնքի ղեկավարի ու ավագանու հետ համատեղ կառուցողական երկխոսության արդյունքում, որպես համայնքի զարգացման ուղղություններ կարևորել նաև գյուղական տուրիզմը , օրգանիկ գյուղատնտեսությունը և ներառել այն Վարդենիկ համայնքի 2017-2021 թթ հնգամյա զարգացման ծրագրում:

Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

1.1. Սույն հուշագրով, համագործակցության շրջանակներում «Համայնքի զարկերակ» ԵՀԿ-ը համաձայնվում է իր հնարավորությունների սահմաններում իրականացնել տարբեր ծրագրեր ի նպաստ համայնքի զարգացման, համագործակցելով Վարդենիկ համայնքի ղեկավարի ու ավագանու հետ.

Վարդենիկի համայնքապետարանը, իր հերթին, համաձայնվում է իր լիազորությունների ու հնարավորությունների սահմաններում աջակցություն ցուցաբերել «Համայնքի զարկերակ» ԵՀԿ-ին ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացման գործում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն Հուշագիրը կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

2.2. Սույն Հուշագիրը չի կարող խախտել Կողմերից որևէ մեկի կողմից ստորագրված միջազգային պայանագրերով սահմանված իրավունքները:

2.3. Սույն Հուշագրի մեկնաբանումից ծագող վեճերը կլուծվեն բարեկամաբար, դիվանագիտական ճանապարհներով, խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

3. Հուշագրի գործողության ժամկետը

3.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

3.2. Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ՝ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-Մաժոր)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

5.2. Սույն Հուշագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5.3. Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմից տրվում է մեկական օրինակ:

«Համայնքի Զարկերակ »
երիտասարդական հասարակական
կազմակերպություն

Հասցե՝ Գեղարքունիքի մարզ,
Վարդենիկ համայնք, մշակույթի տուն
Հեռ. (098) 78-78-30
Էլ. հասցե՝ hamaynqizarkerak@gmail.com

Նախագահ՝
Արտուշ Խաչատրյան

«Վարդենիկի Համայնքապետարան»

Հասցե՝ Գեղարքունիքի մարզ
Վարդենիկ համայնք Կ. Շահինյան 83
Հեռ. (0262) 6-00-86
Էլ. հասցե՝ vardenikgp@mail.ru

Վարդենիկ համայնքի ղեկավար՝
Հովհաննես Հովհաննիսյան